«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Խոսքի զարգացումը դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Հարությունյան Լուսինե
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն_____3
2. Ի՞նչ է խոսքի զարգացումը_____4
3. Աշակերտի խոսքի զարգացման նշանակությունը_____11
4. Կատարյալ խոսքի հատկանիշները_____16
5. Բանավոր ու գրավոր խոսքի առանձնահատկությունները_____18
6. Եզրակացություն_____21
7. Օգտագործված գրականության ցանկ_____22

Ներածություն

Ժամանակակից գրական լեզվի պատմական հիմքը կարելի է համարել բարբառները, որոնք իրենց զարգացման տարբեր շրջաններում ենթարկվել են շատ փոփոխությունների: Գրական լեզվին տիրապետել նշանակում է ներկայանալ որպես կիրթ ու զարգացած անհատ, արտահայտել կատարյալ ու կազմակերպված գրական խոսք: Աշակերտի խոսքի զարգացումը մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկն է: Առանձնակի կարևորվում է կապակցված ու գրագետ խոսքի ստեղծումը, որպես սովորած լեզվական գիտելիքների և ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառություն:

Խոսքի զարգացման համար անփոխարինելի ժամանակաշրջան է երեխայի կրտսեր դպրոցական տարիքը: Կրտսեր դպրոցականը, իր համար էլ աննկատելի, հաճախ սովորում ու ընկալում է հազարավոր բառեր ու արտահայտություններ, ինչն էլ երբեմն հիմք է դառնում հետագա բառապաշարի հարստացման համար: Հաշվի առնելով այս հանգամանքը, անհրաժեշտ է տարրական դասարաններիը դարձնել գրավոր և բանավոր խոսքի զարգացման հիմնական օղակ, մայրենի լեզվի բառապաշարի և ընդհանուր զարգացման կարևորագույն ժամանակաշրջան:

Ի՞նչ է խոսքի զարգացումը

Հանրակրթական դպրոցում մայրենի լեզվի դասավանդման հիմնական խնդիրն է դաստիարակել ու կրթել այնպիսի սերունդ, որը կարողանա լիարժեք հաղորդակցվել շրջապատի հետ իր լեզվագործածական լիարժեք ունակությունների շնորհիվ: Մայրենի լեզուն, միաժամանակ լինելով ուսումնասիրության առարկա և միջոց այլ առարկաների ուսուցման համար, կրթության մեջ ունի առանձնահատուկ դեր ու նշանակություն:

Խոսքի զարգացման աշխատանքներին հիմնավորապես սկսում ենք անդրադառնալ տարրական դասարաններում, երբ աշխատանքներ են կատարվում աշակերտների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության զարգացման, աշխարհայացքի և այլ բարոյակամային որակների ձևավորման ուղղությամբ՝ ստեղծելով որոշակի կրթական մակարդակ՝ միջին դպրոցում խոսքի զարգացման աշխատանքները շարունակելու համար: Ընդ որում՝ տարրական դասարաններում խոսքի զարգացման աշխատանքներին անդրադառնում ենք բոլոր առարկաների դասաժամերին. սովորեցնում ենք ճիշտ կազմել բանավոր և գրավոր խոսք ոչ միայն մայրենի, այլ նաև օտար լեզուներով, կատարում համեմատություններ օտար լեզվի շրջանակներում՝ նշելով տարբերություններն ու ընդհանրությունները, սովորեցնում ենք արտահայտել սեփական ապրումները, մտքերն ու զգացմունքները, գաղափար ենք տալիս շրջապատող իրականության մասին, աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել և ներկայացնել տրամաբանական հաջորդականությամբ և ձեռք են բերում դատողական մտածողություն: Երաժշտություն, Կերպարվեստ և Տեխնոլոգիա առարկաների ուսուցման ժամանակ ապահովում ենք աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, սովորեցնում ընկալել գեղեցիկը, դրականը, զարգացնում ստեղծագործական երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, երաժշտական լսողությունը, ինչը ևս օգնում է խոսել ձայնային ճիշտ ելևէջումներով, ունենալ արտահայտիչ արտասանություն և առոգանություն:

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը:Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը:

Առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նա պահպանում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողությունը, ուշադրության յուրահատկությունն այնպիսինն է, որ երեխան ընդունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավել:

6 տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն և իրավիճակային են, դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ այն դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ: Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական

վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը:

Մայրենի լեզվի ուսուցման ընթացքում ուսուցչի նպատակը պետք է լինի քերականական գիտելիքներից բացի, աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, իրենց ասելիքը հնարավորինս պարզ, հստակ ու գեղեցիկ ներկայացնելու կարողություն: Ուսուցիչը պետք է աշակերտի գիտակցությանը հասցնի, որ լեզվական օրինաչափությունները ուսումնասիրելիս իրենք ձեռք են բերում աշխարհաճանաչողական գիտելիքներ, կրթում կամք և բնավորություն, ինքնակրթությամբ զբաղվելու կարողություն: Հետևաբար լեզվական որևէ կարգ ուսուցանելիս ուսուցիչը պետք է անցկացնի նախապատրաստական զրույց՝ բացատրելով տվյալ քերականական ձևի դերն ու նշանակությունը, կիրառական արժեքը: Օրինակ՝ հնչյունաբանության ուսուցման ընթացքում գործնական ճանապարհով սովորեցնում ենք հնչյունափոխության և ուղղախոսության կանոնները, որոնք անհրաժեշտ են ճիշտ ու գրագետ խոսելու և գրելու համար: Բառագիտության ուսուցման ժամանակ անդրադառնում ենք հոմանիշներին, հականիշներին, համանուններին, հարանուններին, դարձվածքների ոճական առանձնահատկություններին, պատկերավորման միջոցներին՝ ցույց տալով նրանց դերը գեղեցիկ ու հյութեղ խոսք կառուցելու գործում: Բառակազմության միջոցով հիմնականում հարստացնում ենք աշակերտների գործուն բառապաշարը՝ կիրառելով տարբեր բառարաններ (ուղղագրական, բացատրական, բառակազմական, հոմանիշների, ստուգաբանական), որոնցով աշխատելու հմտություններ աշակերտներն արդեն ձեռք են բերել տարրական դասարանում:[1] Քանի որ բառերը ևս դաստիարակության գործիք են և իրենց դերն ունեն աշակերտների, բարոյական, գեղագիտական, հուզական դաստիարակության գործում, հետևաբար ուսուցիչը նախապես պետք է ընտրի այն բառերն ու արտահայտությունները, որոնք համապատասխան հույզ, զգացմունքներ կմշակեն աշակերտների հոգեկան աշխարհում:

Այսօրվա երեխան բավականին առաջադեմ է, առավել տեղեկացված, հետևաբար արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է աշակերտներին նախ հնարավորություն տա արտահայտվելու, որպեսզի ուսումնասիրի նրանց ներուժը, իմացության մակարդակը, այնուհետև, ճիշտ մեթոդ ընտրելով, կազմակերպի ուսուցման գործընթացը՝ աշակերտների մտավոր ունակություններին համապատասխան: Առավել կարևոր է ուսուցման

[1] Ա.Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>:

կազմակերպման արդյունավետ մեթոդի խելամիտ ընտրությունը, քանի որ մենք առնչվում ենք մտավոր տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ և բոլորին միևնույն պահանջներին համապատասխան կրթել հնարավոր չէ. դասարանում միայն հաշված երեխաներ կյուրացնեն մատուցված նյութը:

Աշակերտների անձնական փորձն ու ուսումնասիրությունները ուսուցչի կողմից պետք է ուղղորդվեն այնպես, որ նրանց մեջ ձևավորվեն բարձր բարոյականությամբ և մտավոր կարողություններ ունեցող անհատականություններ: Լավ ուսուցիչը, լավ մասնագետ լինելուց բացի, պետք է կարողա ճանաչել իր սաներին, դառնա նրանց ընկերն ու բարեկամը, ուղղորդի, հավատ ներշնչի ապագայի նկատմամբ: «Երեխային գիտություն են ուսուցանում, նպատակ ունենալով դարձնել նրան ոչ այնքան գիտուն, որքան լուսավորյալ մարդ..., որ նա իրեն զգա ավելի ամուր, հարստանա ու գեղեցկանա ներքուստ», հետևաբար ուսուցիչը պետք է «ունենա ավելի շուտ պայծառ, քան գիտություններով լցված գլուխ, քանզի թեև հարկ է փնտրել և մեկը, և մյուսն ունեցող մարդու, այնուամենայնիվ լավ բարքերն ու խելքը մերկ դիտունությունից գերադասելի են»:[2] Կրթելով աշակերտներին՝ ուսուցիչը նրանց գիտակցությանը պետք է հասցնի այն, որ ուսումնառության տարիների ընթացքում ձեռք բերված գիտելիքները, սովորելու կարողությունը նրանց համար ամուր հիմք են՝ շարունակելու մարդկության զարգացման գործն այնտեղից, որտեղ վերջանում է կուտակված փորձը, որ յուրացնելով ունեցածը և ստանալով հիմնավոր գիտելիքներ՝ ավելի գիտակից ու հիմնավոր կարող են կառուցել նորը, որ ունենալով հարուստ

[2] Գյուլբուդաղյան Ս.Վ. <<Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>>:

ներաշխարհի, կունենան ավելի պայծառ մտածելակերպ, իսկ նման մարդն ավելի հեշտ է հաղորդակցվում շրջապատի հետ: Լիարժեք տիրապետելով մարդկության փորձին, վերլուծելով յուրացրածն ու անցկացնելով այն սեփական գիտակցությամբ՝ աշակերտը կհասկանա, որ կյանքի ճշմարտության որոնման մեջ նրանք արդեն մի քայլ առաջ են անցել և իրենց ընտրած ճանապարհով կարող են առաջ գնալ՝ դրսևորելով իրենց որպես հասարակության անդամ: Աշակերտները պետք է գիտակցեն խոսքի դերը իբրև ճանաչողության միջոց, իբրև տարբեր բնագավառներից ու առարկաներից գիտելիքներ ձեռք բերելու, մտածողության ակտիվացման, աշխարհայացքի ձևավորման և վարքի չափանիշների մշակման կարևոր գործոն: «...Ես չդադարեցի գնահատել այն վարժությունները, որոնցով զբաղվում են դպրոցներում: Ես գիտեի, որ այնտեղ ուսումնասիրվող լեզուները անհրաժեշտ են հին գրքերը հասկանալու համար. որ առակների ազնվությունը արթնացնում է ոգին, որ...պատմության խոհեմ ուսումնասիրությունը նպաստում է ճիշտ դատողության կազմավորմանը. որ լավ գրքերի ընթերցանությունը... զրույց է անցյալ դարերի ամենապատվավոր մարդկանց... հետ, և ընդ որում՝ ուսյալ զրույց...»:[3]

Դպրոցում բոլոր առարկաների ուսումնասիրման արդյունքում զարգացնելով և կրթելով աշակերտների ոգին, ձևավորելով բարձր արժեհամակարգ, ընդլայնելով նրանց մտահորիզոնը՝ հնարավոր է զարգացնել աշակերտների խոսքը, քանի որ, Սենեկայի – 480 – Խոսքի զարգացման փոխհաջորդման սկզբունքը տարրական և.... ճիշտ բնորոշմամբ, «երբ հարցի էությունը լցնում է հոգիդ, բառերն ուղեկցում են նրան» [3, 202]: Խոսքը մեր էության մի մասնիկն է, սրտի, հոգու խորքից է բխում մարդու վերաբերմունքը այս կամ այն առարկայի, երևույթի, իրադարձության նկատմամբ: Խոսքի զարգացումը խթանվում է զգացմունքային շփման, կենդանի խոսքի միջոցով, քանի որ նրա միջոցով արտահայտում ենք սեր, ատելություն, զայրույթ, գոհունակություն և այլն: Խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպելու համար կան բազմաթիվ ծրագրեր ու մեթոդական ձեռնարկներ, որոնց մեջ հիմնական շեշտը դրվում է բառապաշարի հարստացման, քերականական կանոնների ուսուցման վրա, սակայն այդ ամենը բավարար չէ. առավել կարևոր է, որ մարդն օժտված լինի բարու, գեղեցիկի, մարդասիրական գաղափարներով, ունենա հարուստ ու համակողմանի զարգացած ներաշխարհ: Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ իր հետ պետք է տանի ուսումնառության արդյունքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները, որոնք պետք է դառնան նրա սեփականությունը, վերափոխվեն,

[3] Կանեցյան Գ.Ռ. <<Կապակցված խոսքի զարգացումը 1-ին դասարանում>>:

վերածուլվեն և ձևավորեն նրա ներաշխարհը: Դպրոցում լիարժեք կրթություն և դաստիարակություն տալու դեպքում հնարավոր է ձևավորել աշակերտի անհատականությունը, կերտել այնպիսի կերպար, որը կլինի մտածող, ստեղծագործող, կունենա բարոյակամային բարձր որակներ, որոշակի սկզբունքներ, ձևավորված աշխարհայացք և արժեհամակարգ՝ դառնալով անհատականություն՝ հասարակությանը տալով այն, ինչ ձեռք է բերել ուսուցման, կրթության և դաստիարակության արդյունքում:

րեխաները շատ բան կարող են սովորել վաղ տարիքում: Գրքերի հետ երեխայի վաղ շփումը օգնում է երեխային սկսել իր ճանապարհը դեպի ընթերցող և սովորող դառնալը: Գրաճանաչության հիմքերը դնելու համար պետք է դիտարկենք, թե ինչն է շրջապատում գրավում երեխայի ուշադրությունը և հիմնվենք երեխայի բնական հետաքրքրությունների վրա:

Երեխային գրքերի հետ կապելու, գրքերի հրաշալի աշխարհը նրանց համար բացելու համար պետք է երեխաներին ներգրավելու բազմազան ձևեր գտնենք:

Գրքերը երեխաների հետ զրուցելու, նրանց բառապաշարը հարստացնելու և պատմելու հմտությունները զարգացնելու կարևոր հնարավորություն են:

Գրքերն առաջարկում են զրույցի թեմաներ, գաղափարներ և նոր բառեր են ավելացնում երեխաների առօրյա բառապաշարին: Գրքերի հետ ընկերանալու համար մենք երեխաներին օգնում ենք

- ճանաչել գլխավոր հերոսներին,

- հիշել ու արտասանել նրանց անունները և հասկանալ նրանց փոխհարաբերությունները
- ավելի մեծ տարիքի երեխաների հետ խոսում ենք դեպքերի հաջորդականության, կանխատեսելի ու անսպասելի դեպքերի և պատմության շրջադարձերի մասին:
- օգնում ենք նրանց վերհիշել դրանց նման կամ դրանցից շատ տարբեր դեպքեր իրենց կամ մեր սեփական կյանքից:

Երեխաների հետ գրքերի ընթերցելը և դրանց շուրջ զրույցները հնարավորություն են տալիս ավելի շատ բան պարզելու երեխայի, նրա հետաքրքրությունների ու նախասիրությունների մասին: Նույնիսկ երբ երեխաներն արդեն կարողանում են ինքնուրույն կարդալ, շատ կարևոր է միասին կարդալ ու խոսել գրքերի մասին:

Աշակերտների խոսքի զարգացման նշանակությունը

Երեխայի խոսքի ձևավորման գործընթացը կառուցվում է որոշակի մեթոդական սկզբունքների հիման վրա, որոնցով ղեկավարվելիս դաստիարակն ընտրում է համապատասխան մեթոդ-ները, հնարքներն ու միջոցները: Այդ սկզբունքները ելնում են երեխայի լեզվի և խոսքի յուրացման օրինաչափություններից և արտացոլում են մայրենի լեզվի ուսուցման առանձնա-հատկությունները, լրացնում դիդակտիկական սկզբունքները:

Մանագետներն առաջարկում են մայրենի լեզվի ուսուցման հետևյալ սկզբունքները.

1.Երեխայի զգայական, մտավոր և խոսքի զարգացման փոխկապակցվածության սկզբունք.

Այն հիմնվում է խոսքի, որպես լեզվամտածողական գործունեության վրա, որի զարգացումը սերտ կապված է շրջապատող աշխարհի ընկալման հետ: Խոսքը հիմնվում է մտածողության հիմք հանդիսացող զգայական պատկերացումների վրա և զարգանում մտածողության հետ համատեղ: Հարստացնելով երեխայի գիտակցությունը շրջապատող աշխարհի հասկացություններով, մենք զարգացնում ենք նաև նրա խոսքը: Այստեղ պետք է հաշվի առնել նաև մտածողության առանձնահատկությունները, այսինքն՝ զարգացումը պետք է ընթանա կոնկրետ մտածողությունից դեպի վերացականը, պարզից դեպի բարդը:

Հաղորդակցական գործունեության սկզբունքը

Խոսքային գործունեությ ան ընթացքում լեզուն հաղորդակման միջոց է: Այս սկզբունքը ենթադրում է, որ երեխայի խոսքի զարգացումը՝ որպես հաղորդակցման միջոց ամենից արդյունավետ տեղի է ունենում գործունեության ընթացքում: Դա նշանակում է նաև, որ երեխայի գործունեությունն այնպես պետք է կազմակերպել, որ այն նպաստի նրա խոսքային հաղորդակցման կարողությունների զարգացմանը:

3.Լեզվազգայունակության զարգացման սկզբունք

Լեզվազգայունակությունը լեզվի օրինաչափությունների չգիտակցված, ենթագիտակցական տիրապետումն է: Խոսքի համակողմանի ընկալման գործընթացում երեխայի մեջ

ենթագիտակցական մակարդակում ձևավորվում են զուգադրություններ (անալոգիաներ), որոնց շնորհիվ նա յուրացնում է նաև խոսքի օրինաչափությունները: Երեխաներն սկսում են ավելի ազատ օգտվել լեզվի ձևերից, տարրերից, նրանց մեջ ծնվում են բառերը, բառակապակցությունները մտապահելու և խոսքային հաղորդակցման տարբեր իրադրություններում օգտագործելու կարողություն:

4.Լեզվական երևույթների տարրական ձևավորման սկզբունք

Երեխայի խոսքի զարգացման հիմքում ընկած է ոչ միայն մեծերին ընդօրինակելը, այլ նաև լեզվական երևույթների գիտակցական ընկալումը: Երեխայի մեջ ձևավորվում է ճիշտ խոսքային վարքագծի ներքին համակարգ, որը թույլ է տալիս նրան ոչ միայն կրկնել, այլև գիտակցել խոսքային արտահայտությունները: Լեզվի ուսուցման հիմքում ընկած է խոսքային ընդհանրա-ցումների և ստեղծագործական ունակությունների ձևավորումը: Միայն մեխանիկական կրկնությունները բավարար չեն լեզուն յուրացնելու համար: Լեոնտևն առանձնացնում է խոսքի գիտակցման ընկալման հետևյալ ձևերը.

1. ազատ խոսք,
2. խոսքի մասերի գիտակցում,
3. Սեփական խոսքի գիտակցում:

Խոսքի տարբեր կողմերի համակցման սկզբունք

Այս սկզբունքն իրականացվում է լեզվի բոլոր մակարդակների յուրացման և դրանց սերտ փոխկապակցման միջոցով: Խոսքի տարբեր խնդիրների յուրացումը լեզվի համակարգի տիրապետման գործընթաց է: Խոսքի յուրաքանչյուր խնդրի ուղղությամբ տարվող աշխատանքն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է նաև խոսքի մյուս կողմերի ձևավորմանը:[4]

Խոսքային գործունեության դրդապատճառների հարստացման սկզբունք

[4] Էդիլյան Գ.Է. <<Հայոց լեզվի մեթոդիկա>>:

Խոսքային գործունեության ընթացքում կարևորագույն դեր է խաղում դրդապատճառը: Երեխայի համար խոսելը, խոսքային գործունեությունը պետք է պատճառաբանված ու անհրաժեշտ լինի: Այդ պատճառով էլ մեծ նշանակություն ունի երեխայի խոսքային գործունեության դրդապատճառների հարստացումը:

Սա ենթադրում է, որ երեխայի խոսքը զարգանում է նրա ամենօրյա հաղորդակցման ընթացքում, այսինքն՝ երեխայի համար խոսելու, հաղորդակցվելու բնական և իրական դրդապատճառները պետք է լինեն շփվելու, իմանալու, տպավորությունները կիսելու, իր այս կամ այն կարիքը հոգալու բնական պահանջմունքներները:

Ուստի երեխայի հետ շփումը, ինչպես նաև պարապմունքները պետք է կառուցվեն բնական հաղորդակցման վրա, քանի որ բնական հաղորդակցման ընթացքում հաշվի է առնվում երեխայի ցանկությունը, հետաքրքրությունները, ինչը խոսքային գործունեության բնական դրդապատճառներ է ծնում և բարձրացնում արդյունավետությունը:

Դաստիարակի խնդիրն է ստեղծել այնպիսի իրավիճակներ, երբ երեխան հաղորդակցվելու պահանջ ունենա, և ուսուցման յուրաքանչյուր գործողություն պարունակի դրական մոտիվ:

Ակտիվ խոսքային կիրառում ապահովող սկզբունք

Այս սկզբունքի էությունն այն է, որ լեզուն յուրացվում է կիրառման ընթացքում, խոսքային պրակտիկայում: Այլ կերպ ասած՝ «Խոսել սովորում են խոսելով»: Խոսքի ակտիվությունը երեխայի խոսքի զարգացման կարևոր պայմաններից է: Խոսքի ակտիվությունը ոչ միայն խոսելն է, սեփական մտքերն արտահայտելը, այլ նաև լսելն ու ընկալելը: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ է կիրառել երեխայի խոսքի ակտիվացման տարբեր գործոններ. հուզական դրական մթնոլորտ, հաղորդակցում, դիդակտիկ խաղային հնարների կիրառում, հանձնարարություններ և այլն:

Լեզուն նախ և առաջ հաղորդակցման միջոց է: Հետևաբար հատկապես նախադպրոցական երեխայի մայրենի լեզվի ուսուցման և խոսքի զարգացման հիմնական նպատակը պետք է լինի շրջապատի հետ խոսքային հաղորդակցման ունակությունների ձևավորումն ու բանավոր խոսքի զարգացումը:

Խոսքի զարգացման հիմնական խնդիրներն են

ճիշտ արտահայտվելու կարողությունը,

բանավոր խոսքի հարուստ բովանդակությունը:

Երեխայի խոսքը կարող է զարգանալ մի քանի մակարդակներում.

Կառուցվածքային, որը ենթադրում է լեզվի համակարգի տարբեր մակարդակների ձևավորում՝ հնչյունաբանական (հնչյունների ճիշտ արտաբերում), քերականական (քերականորեն խոսքի ճիշտ կառուցում):

2. **Ֆունկցիոնալ,** ենթադրում է հաղորդակցական խոսքի զարգացում, կապակցված խոսքի ձևավորում, այսինքն՝ մենախոսական կարողությունների (երբ երեխան ինչ-որ բան է պատմում) և երկխոսական կարողությունների զարգացում:
3. **Ճանաչողական** կամ **կոգնիտիվ,** երբ լեզուն և խոսքը ծառայում են իմացությանն ու ճանաչողությանը, այսինքն՝ գիտելիքներ ձեռք բերելուն:

Լեզվի հիմնական միավորներն են հնչյունը, վանկը, բառը, բառակապակցություն, նախադասություն, տեքստ:

Ըստ այդմ էլ, երեխայի խոսքի զարգացման խնդիրները կարող են լինել.

1. խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակում,
2. բառապաշարի զարգացում,
3. խոսքի քերականական կողմի, այսինքն՝ քերականական կառուցվածքի ընկալման ձևավորումը,
4. կապակցված խոսքի զարգացում (մենախոսություն և երխոսություն)
5. խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում
6. գեղարվեստական գրականության հետ ծանոթացում:

Կատարյալ խոսքի հատկանիշները

Խոսքի հնչյունային կուլտուրայի դաստիարակումը

Սա բազմակողմանի խնդիր է և կապված է հնչյունների յուրացման և արտաբերման հետ: Այն նախատեսում է

- խոսքային լսողության զարգացում,

- ճիշտ հնչարտաբերում,
- խոսքի արտահայտչական միջոցների տիրապետում. (ուժգնություն, առոգանություն, հնչերանգ, տեմպ):

Նախադպրոցական տարիքը ամենաբարենպաստ ժամանակահատվածն է խոսքի հնչյունային կուլտուրայի զարգացման համար:

Բառապաշարի զարգացում

Քանի որ բառը խոսքի զարգացման կարևոր միավոր է, ապա բառապաշարի տիրապետումը երեխայի խոսքի զարգացման հիմքն է: Բառապաշարում արտացոլվում է խոսքի բովանդակությունը: Բառերը ցույց են տալիս առարկաներ, երևույթներ, նրանց միջև գոյություն ունեցող կապեր, գործողություններ, առարկաների որակներ, հատկանիշներ: Յուրացնելով բառերը՝ երեխան, իրականացնում է շրջապատի հետ հաղորդակցման խնդիրներ: Մանկան բառապաշարի զարգացման մեջ կարևոր են բառի նշանակության յուրացումը, նրա տեղին օգտագործումը տարբեր իրադրություններում և հաղորդակցման մեջ:

Քերականական կառուցվածքի ձևավորումը

Առանց քերականության հնարավոր չէ խոսքային ճիշտ հաղորդակցում: Սա երեխայի համար բարդ է ընկալելը, ուստի նա լեզվի քերականական կողմը յուրացնում է գործնականում՝ մեծահասակի խոսքի ընդօրինակման և լեզվական ընդհանրացումների շնորհիվ:

Կապակցված խոսքի զարգացում

Այն ներառում է մենախոսության և երկխոսության կարողությունների զարգացում: Կապակցված խոսքը սկսում է ձևավորվել այն ժամանակ, երբ երեխան հաղորդակցվելու կարիք է ունենում: Ուստի կապակցված խոսքի ձևավորումը սկսում է երկխոսության կարողությունների զարգացումից: Երկխոսությունը նախադպրոցականի շփման հիմնական ձևն է: Կարևոր է երեխային սովորեցնել

- լսել և հասկանալ դիմացինի խոսքը, միտքը

- ձևակերպել իր միտքը, երկխոսությունը առաջ տանել,
- հարցեր տալ և պատասխանել՝ օգտվելով լեզվական տարբեր միջոցներից:

Մենախոսության զարգացումը նախատեսում է տեքստը հասկանալու, վերապատմելու և այն ինքնուրույն կառուցելու կարողություն:

Խոսքի և լեզվի տարրական երևույթների գիտակցման ձևավորում

Այն երեխայի նախապատրաստում է լեզվի յուրացման գրաճանաչության փուլին: Դաստիարակը զարգացնում է բանավոր խոսքը, աշխատանք տանում բառերի հնչյունական վերլուծության ուղղությամբ, գիտակցաբար վերլուծում է բառը, վանկը, նախադասությունը:

Ծանոթացում գեղարվեստական խոսքի հետ

Խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի նաև գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այն մեծ նշանակություն երեխայի անձի ձևավորման համար որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորումը:

Բանավոր ու գրավոր խոսքի առանձնահատկությունները

Եթե երեխաները մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ կարդում ու գրում են, ապա նրանք այդ մասին բավական բան են սովորում իրենց առաջին ուսուցչին հանդիպելուց տարիներ առաջ: Նրանք իրենց համար բացահայտում են լեզվական կառուցվածքների իմաստը, սովորում են այն հմտորեն կիրառել:

Մանկապարտեզում և տանը մեծ աշխատանք պետք է տանել՝ նախապատրաստելու համար երեխաներին գրելու ու կարդալու լավ մեկնարկին: Այս ամբողջ գործընթացը անվանում են վաղ կամ նախնական գրաճանաչություն:[5]

Վաղ կամ նախնական գրաճանաչությունը

- երեխայի փորձառության մեջ մի փուլ է, որն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան առաջին անգամ տեսնում է գիրքը և զարմանում, թե մարդիկ ինչպես են օգտվում դրանից, և ավարտվում է այն ժամանակ, երբ երեխան կարողանում է ինքնուրույն կարդալ բառերը,
- վաղ ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցում, որ երեխան ստանում է տանը կամ մանկապարտեզում և հասկանում, թե ինչ է կարդալն ու գրելը և ինչին են դրանք ծառայում:

Քանի որ տպագիր խոսքը ներկայացնում է այն լեզուն, որով խոսում են, երեխաները, նրանք պետք է հասկանան տպագիր խոսքի լեզուն և ըմբռնեն այդ լեզուն ներկայացնող տպագիր խոսքի առանձնահատկությունները:

Նախնական գրաճանաչությունը ենթադրում է, որ գրաճանաչության զարգացումը տեղի է ունենում երեխայի ներսում: Այն նաև ենթադրում է, որ այս գործընթացն աստիճանական է և որոշակի ժամանակ է պահանջում:

Ահա թե որոնք են նախնական գրաճանաչության ձևավորման գործընթացի բաղադրիչները,

- **Կարդալ գրել սովորելը սկսվում է կյանքի շատ վաղ շրջանում:**

Երեխաները, որպես կանոն, շատ վաղ են շփվում գրավոր լեզվի հետ: Տանը նրանց համար գրքեր են կարդում, նրանք տանը և դրսում տեսնում են ամենատարբեր ցուցանակներ, պիտակներ և պատկերանիշեր: Վաղ տարիքում երեխաները փորձում են նաև «գրել»՝ խզբզել:[6]

- **Կարդալն ու գրելը վաղ տարիքում զարգանում են միաժամանակ ֆ փոխկապակցված:** Երեխաները չեն սովորում նախ՝ կարդալ, իսկ հետո՝ գրել: Իրականում գրելը՝ որպես վաղ ուսումնական գործունեություն, երեխաների համար ավելի հեշտ է, քան կարդալը:
- **Գրաճանաչությունը զարգանում է իրական կյանքի իրավիճակներում, որտեղ կարդալն ու գրելը ծառայում են որոշակի գործողություններին:**
- **Երեխաները գրաճանաչություն են սովորում ակտիվ ներգրավվելով որոշակի գործունեության մեջ**, օրինակ՝ իրենց սիրելի պատմություններն

[5] Ս. Աբրահամյան <<Աշակերտի խեսքի զարգացում>>

[6] Էդիյյան Գ.Է. <<Հայոց լեզվի մեթոդիկա>>:

«ընթերցելու» միջոցով: Երբ երեխան մատը, սահեցնելով գրքի տողերի վրայով, «վերընթերցում» է իր սիրելի գիրքը, նա անգիր չի կրկնում մտապահված տեքստը, այլ ավելի շուտ վերակառուցում է գրքի բովանդակությունը: Կամ երեխաները հաճախ ձևացնում են, թե գրում են, Գրելու այդ նմանակումը մի ձև է՝ տեսնելու այն հնչյունների տարրերը, որոնք ծանոթ են երեխային:

- *Երեխաների համար կարդալը հատուկ դեր է խաղում վաղ գրաճանաչության զարգացման համար:*

Լսելով, թե ինչպես է հնչում տպագիր խոսքը՝ երեխաները ձեռք են բերում գրավոր խոսքի օրինաչափությունների, ընթացքի և բնույթի զգացողություն: Երեխաներն ընդհանուր պատկերացում են կազմում այն մասին, թե ինչ բան է կարդալը և ինչի է այն նման: Նրանց մոտ ձևավորվում է դրական վերաբերմունք կարդալու նկատմամբ, ինչը սովորելու հզոր դրդապատճառ է դառնում, երբ երեխան գնում է դպրոց: Դա նաև երեխաների մոտ գրքի, տպագիր տեքստի և կարդալու մասին հասկացությունների ձևավորման կարևոր միջոց է:

Վաղ տարիքում, երբ երեխաների համար գրքեր են կարդում, նրանք սովորում են, թե ինչպես են մարդիկ կարդում, որ գրված նշանները կարելի է «խոսեցնել», և աստիճանաբար իրենք էլ սկսում են նմանակել նման վարքը: Աստիճանաբար նրանք սովորում են ինչպես պահել գիրքը, թերթել էջերը, նայել նկարները՝ պատմությունը հասկանալու համար:

Հետո երեխաները սկսում են նկատել տարբերությունը նկարների և նշանների՝ տառերի միջև: Նրանք սովորում են, որ այդ նշաններն իմաստ ունեն: Նրանք նաև փորձում են իբր թե «ընթերցել»՝ մատը սահեցնելով տողերի վրայով:

Հետո երեխաները սովորում են իրենց շրջապատում ճանաչել առանձին բառեր և կարողանում են ասել, թե ինչ են դրանք նշանակում: Ավելի ուշ նրանք սովորում են այբուբենի տառերն ու հնչյունները և դառնում են ինքնուրույն ընթերցողներ:

Մասնագետներն ասում են, որ կարդալ սովորելու համար երեխաները նախ՝ տեսնում են, թե ինչպես են մեծերը կարդում, սովորում են սիրել գրքերը, հետո

- բացահայտում են, որ տպագիր տեքստն իմաստ ունի,
- մտապահում և վերապատմում են գրքերը,
- Ճանաչում և կարդում են առանձին բառեր
- ընթերցում են ինքնուրույն:

Ընդ որում, այս փուլերից յուրաքանչյուրը կարող է և պետք է ուղեկցվի բազմազան վարժություններով, որոնք կարող են ուղղակիորեն չառնչվել գրքին, բայց բխեն երեխայի հետաքրքրություններից, ձեռք բերված գիտելիքներից ու հմտություններից:

Գոյություն ունի նաև նախնական գրաճանաչության մակարդակի գնահատման թեստ, որը մշակվել է «Քայլ առ քայլ» ԲՀ-ի « Ընթերցանության կարողությունների ձևավորում տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա» ծրագրի շրջանակներում: Ըստ այս

թեստի, երեխաների նախնական գրաճանաչությունը ենթադրում է մասնակի գիտելիքներ լեզվի և տպագիր խոսքի մասին: Սա նշանակում է, որ երեխան պետք է.

Գաղափար ունենա տպագիր խոսքի մասին, այն մասին, թե ինչ է տպագիր խոսքը և ինչպես է այն գործում, իմանա գրքերի կառուցվածքը. կարողանա ճիշտ բռնել և ճիշտ թերթել գիրքը, իմանա, որ կարդում ենք տպագիր տեքստը և ոչ թե նկարները, Իմանա, որ կարդում ենք էջի վերևից ներքև և աջից ձախ:

Իմանա գրավոր խոսքի այբբենական բնույթի մասին. իմանա, որ գրում են տառերի միջոցով, որոնք ներկայացնում են լեզվի հնչյունները, Ճանաչի հայերեն այբուբենը (տարբերակի այն այլ լեզուներից), իմանա որոշ տառեր:

Իմանա որոշ ուղղագրական հասկացություններ. հասկանա, որ ամեն տառը համապատասխանում է մեկ հնչյունի, տարբերակի բառերն ու տառերը, հասկանա, որ բառերն իրարից անջատվում են բացատով Ճանաչի որոշ կետադրական նշանները:

Եզրակացություն

Մեծ լուսավորիչ Խ. Աբովյանն ասել է՝ << Լեզվի մեջ, ինչպես մաքուր հայելու մեջ, ցոլանում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը>>:

Գրական խոսքի կուլտուրան մեր ժամանակներում դարձել է գերխնդիր: Աշակերտի գրավոր և բանավոր խոսքի զարգացումը իր կրթադաստիարակչական խոշոր նշանակության պատճառով պետք է մտահոգի ոչ միայն տարրական դասարանների և հայոց լեզվի ուսուցիչներին, այլ նաև ամբողջ ուսուցչական կազմին և մնացած առարկաների ուսուցիչներին: Մինչև դպրոց հաճախելը երեխայի խոսքը տարերային է և անկազմակերպ: Կրտսեր դպրոցից սկսած երեխան պետք է լսի և կարողանա կառուցել ճիշտ, գրագետ, հարուստ խոսք թե՛ գրավոր, թե՛ բանավոր: Իսկ դրա համար անհրաժեշտ է սստեղծել խոսքի մշակույթի միասնականություն, որի համար պատասխանատու լինի դպրոցի ղեկավարությունը: Պատշաճ ու գրագետ, ճիշտ ու հարուստ, գեղեցիկ ու գրավիչ խոսքը պետք է դառնա յուրաքանչյուրիս նպատակը և կրտսեր դպրոցում հիմք դնի լեզվական մշակույթի ձևավորմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Աբրահամյան <<Աշակերտի խոսքի զարգացում>>

2. Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>>

3. Սվ. Գյուլբուդաղյան <<Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>>

4. Էդիլյան Գ. Է. << Հայոց լեզվի մեթոդիկա >>

5. Կանեցյան Գ. Ռ. << Կապակցված խոսքի զարգացումը 1-ին դասարանում >>